Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 27-ի N 1018 - Լ որոշման

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	2019թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը
1 Կառավարման համակարգի կատարելագործում						
1.1	«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման համակարգի բարելավում	1) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում	Բնապահպանության նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019 թ. և շարունակական	«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում
		2) Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում	Արտակարգ իրավիճակների նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)		Արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևույթաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ

						առևտրային կազմակերպության և Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2019թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան
		3) «Սևան» ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմա կերպում	Բնապահպանության նախարարություն	Արտակարգ իրավիճակների նախարարություն Առողջապահության նախարարություն «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (համաձայնությամբ)		«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփական միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
		4) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարողությունների զարգացում (մասնավորապես՝ տարեկան անտառպլանավորման, հատատեղերի հատկացման տեղորոշման), մասնագիտական ունակությունների կատարելագործում	Բնապահպանության նախարարություն		2019թ.	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին

2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ						
2.1	Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	Առաջնահերթ մաքրման ենթակա, մասնավորապես՝ ջրածածկ և ջրածածկման ենթակա անտառաշերտի մաքրում, շուրջ **66,8 հա**	Բնապահպանության նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառում՝ **117,062.0 հազ. դրամ**
2.2	Սևանա լճի շրջակայքում նոր անտառ շերտի հիմնում	Լճի շրջակայքում անտառաշերտի հիմնում	Բնապահպանության նախարարություն	Գեղարքունիքի մարզպետարան	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
2.3	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների մաքրում	Տնտեսվարող սուբյեկտներ (համաձայնությամբ)	Բնապահպանության նախարարություն	2019 թ. և շարունակական	Ապօրինի կառուցված մաքրման ենթակա շենք-շինությունների սեփականատերերի միջոցների հաշվին, տիրազուրկ շինությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
2.4	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգ	կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում,	Բնապահպանության նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) Գեղարքունիքի մարզպետարան	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի

	տագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում	ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում				պաշարների հաշվառում» միջոցառման շրջանակներում՝ **7,624.3 հազ. դրամ** և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
2.5	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, զբոսաշրջության, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Գյուղատնտեսության նախարարություն Քաղաքաշինության կոմիտե Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն Բնապահպանության նախարարություն	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Վայոց ձորի մարզպետարան Սյունիքի մարզպետարան	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին

2.6	Անտառշերտերի և հողահանդակների հաշվառում, գույքագրում	Ափամերձ անտառների գույքագրում և հողօգտագործման քարտեզների թարմացում, (տարբեր նշանակության (գյուղատնտեսական, բնապահպանական և այլն)	Բնապահպանության նախարարություն	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
2.7	Էկոլոգիական (տարածագործառնական) գոտիների սահմանների ճշգրտում	1) Տարածագործառնական գոտիների ճշգրտում, սահմանների վերանայում	Բնապահպանության նախարարություն	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե Քաղաքաշինության կոմիտե	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
		2) Սևանա լճի ափամերձ տարածքների մինչև 1905 մ բարձրության հորիզոնական նիշերի ճշգրտում	Բնապահպանության նախարարություն	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին
2.8	Սևանա լճի ջրհավաք ավազանում առաջացած կեղտաջրերի մաքրում	Լճի անմիջապես ափամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում	Տնտեսվարող սուբյեկտներ (համաձայնությամբ)	Բնապահպանության նախարարություն	2019թ. և շարունակական	Տնտեսվարող սուբյեկտների միջոցների հաշվին

2.9	Ձկան պաշարների համալրում	էնդեմիկ և հազվագյուտ ձկնա տեսակների վերարտադրու թյան ապահովում	Սևանի իշխանի պաշարների վերա կանգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ), Բնապահպանության նախարարություն	Բնապահպանության նախարարություն Գեղարքունիքի մարզպետարան Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ. և շարունակական	Սևանա լճում իշխանի պաշարների վերա կանգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում
2.10	«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջա վայրի դիտանցի իրականացում, հետազոտման տեխնոլոգիաների կիրառություն	Բնապահպանության նախարարություն	Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019 թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում միջոցառում՝ **252,666.4 հազ. դրամ**
2.11	Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա	աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Քաղաքաշինության կոմիտե Բնապահպանության նախարարություն Առողջապահության	Գեղարքունիքի մարզպետարան «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (համաձայնությամբ)	2019թ. և շարունակական	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին

	աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում		նախարարություն			
2.12	Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգի հավատարմագրային կառավարման իրականացում	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործում և պահպանում՝ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե		2019թ.	2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված ՆԾՁԲ-04/36 պայմանգրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2017-2019 թվականների համար յուրաքանչյուր տարի Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել **205,800.0 հազ. դրամ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ